Հայաստանի Ամերիկյան

Օրերս Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) հանդիսությամբ նշեց իր հիմնադրման տասնամյա հոբելյանը: Համալսարանի տասնամյա գործունեության հոբելյանական միջոցառումների շարքն ընդգրկում էր մամուլի ասուլիսը, նախորդ տարիների և նոր շրջանավարտների հավաք-ճաշկերույթը, հոբելյանական հանդիսավոր երեկոն և 2001թ. ավարտական արարողությունը:

Մամուլի ասուլիսի ընթացքում ՀԱՀ նախագահ Դր. Հարություն Արմենյանն անդրադարձավ համալսարանի կրթական գաղափարախոսությանն ու նպատակներին: Նա նշեց, որ ՀԱՀ-ի առաքելությունն է իրականացնել կրթական ծրագրեր, հետազոտություններ և ծառայություններ, որոնք ուսանողին պատրաստում են գործելու ի նպաստ Հայաստանի և տարածաշրջանի շարունակական զարգացմանն այնպիսի միջավայրում, որն արժևորում է ակադեմիական գերազանցությունը և քաջալերում ազատ հարցապնդումը, գիտականությունը, առաջնորդումը և հասարակությանը ծառայելը: Դր. Արմենյանը կարևորեց, որ Հայաստանի ամերիկյան համալսարանն իր կրթության փիլիսոփայությունը խարսխում է չորս կարևորագույն սկզբունքների վրա՝ ազատ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԱԿ, ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ և հետապնդում մեկ գերխնդիր՝ առավելագույնս արձագանքել հանրապետության զարգացման առաջնահերթություններին և ժողովրդավարական բարեփոխումներին: Այսպես օրինակ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գերակա զարգացման համար մեծ կարևորություն կունենա «Համակարգչի և տեղեկույթի» գիտության մագիստրոսի կոչում շնորհող նոր ծրագրի հիմնումը, որի հիմնական դասընթացները կսկսվեն 2002թ. գարնանը:

Մամուլի ասուլիսի ժամանակ

Ժամանակակից տեխնոլոգիաների և համակարգչային սարքաշարերի օգտագործման հիման վրա ստեղծված «Հայ մատենագիտության թվային շտեմարան»-ը 2001թ. մայիսին արժանացավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի կողմից «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 2000թ. լավագույն աշխատանքի համար» սահմանված մրցանակին: Գրադարանը թվայնացրել է 5-18 դարերի հայ գրականության մոտ 500 հատոր գիրք, որի շուրջ կեսն արդեն իսկ մատչելի է www.digilib.am հանգույցում:

Դր. Արմենյանը նաև նշեց, որ կիրառական նշանակություն ունեցող հետազոտություններ են իրականացրել հասարակական ուսումնասիրությունների, ճարտարագիտական հետազոտության, առողջապահական ծառայությունների և շրջակա միջավայրի պահպանման կենտրոնները: Այդ թվում՝ երկրաշարժի գոտում բնակարանային հատկացման և տեղական կառավարման մարմիններում քաղաքացիների մասնակցության բարձրացմանն ուղղված ծրագրերը, բնապահպանական դաստիարակության մասին առաջարկություն-ծրագիրը, որը ներկայացվել է Ազգային Ժողով քննարկման, արևի էներգիայի օգտագործման հիման վրա ջեռուցման և հովացման ծրագիրը, առողջապահական ոլորտում կառավարման որակի ապահովման ծրագիրը և այլն:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը պարգևատրում է ՀԱՀ պատվավոր նախագահ Դր. Միհրան Աղբաբյանին «Մովսես Խորենացու» մեդալով:

Ամենամյա ավանդույթ դարձած շրջանավարտների հավաք-ճաշկերույթը կայացավ հոկտեմբերի 5-ին «Վալենսիա» նորաբաց սրահում: Միջոցառումը յուրօրինակ ու մտերմիկ հանդիպում էր ՀԱՀ-ի տասը տարվա շրջանավարտների, որոնք հավաքվել էին միմյանց ծանոթանալու, սիրված բուհի 10-րդ տարեդարձը շնորհավորելու, ինչպես նաև հոբելյանական տորթ ճաշակելու: Միջոցառման ընթացքում Շրջանավարտների ասոցիացիայի պատվավոր անդամներ հռչակվեցին ՀԱՀ-ի հիմնադիրներ և մի շարք դասախոսներ: ՀԱՀ-ի շրջանավարտներից շատերն այժմ

Հին և նոր շրջանավարտների հավաք—ճաշկերույթի ժամանակ

Համալսարանը 10 տարեկան է

պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական կառույցներում, Հայաստանում գտնվող արտասահմանյան ներկայացուցչություններում, ոմանք նույնիսկ սեփական գործ են սկսել և դրվատանքի արժանացել՝ ազատամիտ ու առաջադեմ աշխարհայացքի շնորհիվ: Ըստ վերջերս իրականացված հարցման՝ ՀԱՀ-ի 780 շրջանավարտների 72%-ն աշխատում է Հայաստանում: Նրանցից շատերը ստանձնել են պատասխանատու պաշտոններ, այդ թվում՝ 'HSBC' բանկի գործադիր փոխտնօրենը, Հայաստանում գործող Թուֆենկյան Ընկերությունների գլխավոր տնօրենը, Լինսի հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրենը, Պետական գույքի կառավարման փոխնախարարը, Եվրասիա հիմնադրամի վարկային ծրագրերի ղեկավարը, Կոնյակի գործարանի ֆինանսների գծով տնօրենը, Կոկա-կոլա գործարանի մարկետինգի բաժնի տնօրենը և այլոք: Արտերկիր մեկնածների զգալի մասը մասնակցում է տարբեր կրթական ծրագրերի՝ ուսումը շարունակելու նպատակով:

Ավարտական արարողություն. երկար սպասված պահը

Միջոցառումների շարքից ամենաարժանահիշատակը, թերևս, հոկտեմբերի 6-ին կայացած հոբելյանական երեկոն էր, որին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, նախարարներ, դեսպաններ, ուսանողներ, դասախոսներ և ծնողներ: ՀՀ կրթական համակարգում ներդրած մեծ ավանդի համար ՀԱՀ-ի տասնամյակի առիթով հանրապետության նախագահը «Մովսես Խորենացու» մեդալով պարգևատրեց ՀԱՀ պատվավոր նախագահ Դր. Միհրան Աղբաբյանին, ՀԱՀ նախագահ Դր. Հարություն Արմենյանին և ճարտարագիտության բաժնի դեկան Դր. Արմեն Տեր-Կյուրեղյանին: Ինչպես նշեց Ռոբերտ Քոչարյանը,- «ՀԱՀ-ը նման կարգի առաջին հաստատությունն է ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում և կարևոր դեր է խաղում ժողովրդավարության արևմտյան չափանիշների, շուկայական տնտեսության, ուսուցման արդիական սկզբունքների ներմուծման և ընդհանրապես նոր մտածողություն սերմանելու գործում»: ՀՀ Կրթության և Գիտության նախարարության ոսկե մեդալով պարգևատրվեցին նաև ՀԱՀ հոգաբարձուների հիմնադիր խորհրդի նախագահ Դր. Ուիլյամ Ֆրեյզերը և ՀԱՀ փոխնախագահ Դր. Դոնալդ Ֆուլլերը:



«Հայաստանի ամերիկյան համալսարան-նվաճումների տասնամյակ» նորընծա գիրքը հայերեն և անգլերեն

Մեծ շուքով նշվեց նաև 2001թ.-ի ավարտական արարողությունը, որի ընթացքում մագիստրոսի կոչում ստացան 101 նոր շրջանավարտներ, որոնք նույնպես իրենց նպաստը կբերեն ժողովրդավարության կայացմանն ու տնտեսական բարգավաճմանը: Հայաստանի ամերիկյան համալսարանի տասնամյակի շքանշանով պարգևատրվեցին Դր. Վիլիկ Հարությունյանը (հետմահու), Դր. Ցովակ Ավագյանը (ՀՀ Կրթության և գիտության նախարարության արտաքին կապերի վարչության նախկին պետ), Էդվարդ Ավետիսյանը (ՀԱՀ հոգաբարձուների խորհրդի անդամ), ՀԱՀ փոխնախագահ Դր. Դոնալդ Ֆուլլերը և Դր. Յուրի Սարգսյանը (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր):

ՀԱՀ-ի տասնամյա գործունեության ընթացքում ձեռք բերած նվաճումները լավագույնս արտացոլվել են նորաստեղծ վավերագրական ֆիլմում, որի անդրանիկ ցուցադրումը կայացավ ՀԱՀ տասնամյակի հանդիսության օրը, ինչպես նաև «Հայաստանի ամերիկյան համալսարան-նվաճումների տասնամյակ» հայերեն և անգլերեն լեզուներով նորընծա գրքում: Համալսարանի շրջանավարտների, մի շարք գործատուների ֆինանսական աջակցությամբ հրատարակված այս գունազարդ գիրքը անդրադարձել է համալսարանի անցած ճանապարհին և ժամանակագրությանը, ուսումնական ծրագրերին և հետազոտական կենտրոններին, շրջանավարտների վիճակագրությանը, իսկ վերջում տեղ են գտել մինչև օրս ՀԱՀ ավարտած բոլոր շրջանավարտների անունները:

Գրքին և ֆիլմին ծանոթանալու հնարավորություն կունենան նաև Սան Ֆրանցիսկոյում և Լոս Անջելեսում համապատասխանաբար դեկտեմբերի 3-ին և 8-ին կայանալիք հոբելյանական միջոցառումների մասնակիցները:

Էդիտա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՀ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին